

2021

**ԲԱԶՄԱՖՈՒՆԿՅՈՒՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ**

ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Կոմիտաս պ. 60

ՇՐՋԱԿԱ ՍԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ /լրամշակված/



ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝  
«ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ 1» ՍՊԸ

ԿԱՏԱՐՈՂ  
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան  
ք. Երևան Սևանի 5  
Հեռ. բջջ. +374 99 994222  
galoyan.aram@gmail.com

ՀՀ



ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԿ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ  
ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Կոմիտաս պ. 60

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

/լրամշակված/

«ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ 1» ՍՊԸ տնօրեն՝

Ա. Խաչատրյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2021

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն .....	5
1.3	Հապավումներ .....	5
1.4	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը .....	6
1.5	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը .....	7
1.6	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնատեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	9
1.6.1	<i>Ներկա վիճակի նկարագիր</i> .....	9
1.6.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i> .....	10
1.6.3	<i>Իրավիճակային հատակագիծ</i> .....	13
1.6.4	<i>Գլխավոր հատակագիծ</i> .....	14
1.6.5	<i>Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց</i> .....	16
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ .....	17
2.1	Աշխատանքների կատարման սխեմա.....	18
	Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են .....	20
2.2	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....	20
2.3	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	21
2.3.1	<i>Նյութերի և բնատեսուրսների օգտագործում</i> .....	21
2.4	<i>Տնտեսական - խմելու ջրամատակարարման ներքին ցանց</i> .....	23
	<i>Տաք և սառը ջրամատակարարում</i> .....	23
2.5	<i>Կենցաղային կոյուղու ներքին ցանց</i> .....	24
2.6	<i>Կենցաղային կոյուղու արտաքին ցանց</i> .....	24
2.7	<i>Ջրահեռացման ներքին ցանց</i> .....	25
2.8	<i>Հրդեհամարման ցանց</i> .....	25
2.9	<i>Ոռոգում</i> .....	27
2.10	<i>Ջեռուցման և ջերմամատակարարման համակարգեր</i> .....	27
2.10.1	<i>Ջեռուցման համակարգ</i> .....	27
2.10.2	<i>Ջերմամատակարարման համակարգ</i> .....	28
2.11	<i>Ընդհանուր փոխանակային և հակաձխային օդափոխության համակարգեր</i> .....	28
2.12	Ընդհանուր փոխանակային օդափոխության համակարգերի հակահրդեհային պաշտպանություն.....	30
2.13	Աղմուկից և վիբրացիայից պաշպանության միջոցառումներ .....	30
2.14	Էներգախնայողության միջոցառումներ.....	31
2.15	Էլ. մատակարարում.....	32
2.16	Գազամատակարարում.....	32
2.17	Կանաչապատման աշխատանքներ.....	32
2.17.1	<i>Կանաչ տարածքի ռոոգման ջրապահանջի հաշվարկ</i> .....	33
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ .....	35
3.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	35
3.2	Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը.....	36
3.3	Կլիման .....	36
3.4	Օդային ավազան.....	41
3.5	Ջրային ռեսուրսներ .....	45
3.6	Հողերի նկարագիրը .....	45
3.7	Հողային ռեսուրսներ .....	45
3.8	Բուսական աշխարհ .....	46

3.9	Կենդանական աշխարհ .....	46
3.10	Թափոնների կառավարում .....	47
3.11	Արաբկլիր վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ .....	48
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	51
4.1	Ռիսկերի գնահատում .....	51
4.2	Արտանետումների աղբյուրները .....	51
4.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	52
4.3.1	<i>Մթնոլորտային օդ</i> .....	52
4.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i> .....	52
4.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i> .....	52
4.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i> .....	53
4.3.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ</i> .....	53
4.3.6	<i>Աղմուկ և թրթռում</i> .....	54
4.3.7	<i>Թափոնների կառավարում</i> .....	54
4.3.8	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i> .....	55
5.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ .....	55
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	57
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	60
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	62
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	63

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ 1» ՍՊԸ

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 127/21

1.5 Նախատեսվող գործունեության հասցեն՝ ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Կոմիտասս փ. 60

1.6 Հեռախոս՝ +37499994222

1.3 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

#### 1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր: Բնակելի համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Կոմիտաս փ. 60 հասցեում:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան<sup>1</sup>:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող

<sup>1</sup> ՀՀԸՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԽՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ  
 ՀՀԸՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ  
 ՀՀԸՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀԸՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ  
 ՔԱՂԱՔԱՇԽՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ  
 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ  
 ՀՀԸՆ 20.04-2020 «ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՅԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ»

գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

**1.5 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք** (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը

հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)** - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:



«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

## 1.6 Նախատեսվող գործունեության բնութագրերը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

### 1.6.1 Ներկա վիճակի նկարագիր

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Կոմիտաս փ. 60 հասցեում:

Հողամասի մակերեսը կազմում է 0.565 հա՝ կադաստրային ծածկագիր՝ 01-003-0223-0197:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը գտնվում է Արաբկիր համայնքում, Կոմիտաս պողոտայի մերձակա տարածքում, բուն պողոտայից որոշակի հեռավորության վրա, դեպի Զարյանի փողոց: Տարածքը ունի բնական թեքություն՝ Զարյանի փողոցի ուղղությամբ, որի վերին և ստորին նիշերի տարբերությունը կազմում է 5մ:

Բազմաֆունկցիոնալ համալիրի անմիջապես հարևանությամբ գտնվում է նորակառույց «Սուրբ Խաչ» եկեղեցին: Տարածքի հարևանությամբ առկա են նաև 2-3 հարկանի բնակելի և ոչ բնակելի կառույցներ, ինչպես նաև 14 հարկանի բազմաբնակարան բնակելի շինություն:

Հողամասը ծանրաբեռնված է արտադրամասով, որն ենթակա է ապամոնտաժման: Արտադրական շենքի մակերեսը կազմում է 1256մ<sup>2</sup>: Հողմասում բուսականությունը բացակայում է, տարածքը ասֆալտապատ է:

ՀՀ Կառավարության 29.12.2011թ. N 1920 – Ն որոշմամբ սահմանված կարգով՝ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխվել են համապատասխանաբար բնակավայրերի և բնակելի կառուցապատման: Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

## 1.6.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

### Նախագծման ելակետային տվյալներ

Նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք են ծառայել հետևյալ հենակետային նյութերը:

- Պատվիրատույի կողմից տրամադրված նախագծային առաջադրանքը:

- Երևանի քաղաքապետարանի կողմից տրված N 01/18-07/216-Ա առ. 08.02.2021թ. ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

- Եզրակացություն տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանների մասին:

- Տեղանքի գեոդեզիական հանույթ:

### Ծավալատարածական լուծումներ

Համալիրի ճարտարապետական և գեղարվեստական լուծումների ընտրության մեջ մեծ դեր է խաղացել Սուրբ Խաչ՝ եկեղեցին: Հաշվի առնելով եկեղեցու ճարտարապետությունը՝ համալիրի արտաքին գեղարվեստական կերպարի կազմակերպման մեջ շեշտը դրվել է կամարակապ խորշերի և ժամանակակից դինամիկ ծավալային լուծումների սինթեզի վրա:

Համալիրը եկեղեցուն հարող մասում ունի 8 - վերգետնյա հարկ, որը նիշով համապատասխանում է եկեղեցու թմբուկի ստորին նիշին, որից հետո տերասաձև զարգանալով՝ հաշվի առնելով եկեղեցու թմբուկի վերին նիշը, ինչպես նաև վեհարի վերին նիշը աստիճանաբար աճելով ստանում է նախ՝ 11 հարկանի ծավալ, 15 հարկանի ծավալ, ապա վերջնական տեսքի է գալիս 19 հարկանի աշտարակով:

Համալիրը ունի ստորգետնյա ավտոկայանատեղի, հաշվի առնելով բնական ռելեֆը մուտքը նախատեսվում է իրականացնել - 1 հարկի նիշից:

Շինությունը սեյսմիկ կարաններով բաժանվում է 3 մասնասհենքի, որոնցում 1 և 2 մասնաշենքերը ունենում են մեկ մուտքային հանգույց, իսկ 3-րդ մասնաշենքը երկու մուտքային հանգույց:

Կառույցի 1,2,3 մասնաշենքերի առաջին վերգետնյա հարկը և - 1 կիսաստորգետնյա հարկը ծառայելու են հասարակական, կոմերցիոն նպատակով, ստորգետնյա 2 հարկերում ամբողջ հողահատկացման մակերեսով կազմակերպված է ավտոկայանատեղիներ: 2-րդ հարկից սկսած նախատեսված են որպես բնակելի հարկեր:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ընդհանուր բնակարանների քանակը կազմում է 297 բնակարան, իսկ ավտոկայանատեղերի քանակը 208 կայանատեղի, որը կազմում է ընդհանուր բնակարանների քանակի 70%-ը:

Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 5651.0 մ<sup>2</sup> 1,2,3 մասնաշենքերը միասին վերգետնյա կառուցապատման մակերեսը կազմում է 2523.6մ<sup>2</sup>, ստորգետնյա կառուցապատման մակերեսը կազմում է 5441.0 մ<sup>2</sup>:

Առաջին հարկի հարդարված հատակի ±0.000 նիշը համապատասխանում է +1189.50 բացարձակ նիշին:

Համալիրի կոնստրուկտիվ համակարգը իրենից ներկայացնում է ե/բետոնե շրջանակային հիմնակմախք: 1,2,3 մասնաշենքերի հիմքերը ե/բետոնե ժապավենաձև են:

Արտաքին պատերը նախատեսվում են իրականացնել 1 շարք 200 մմ հաստությամբ ամրանավորված բետոնե բլոկներով, 80 մմ հաստությամբ հանքաքամքակ ջերմամեկուսիչ սալերով (արտաքին կողմից) և երեսպատել ստադախարսխային համակարգի միջոցով 40 մմ հաստությամբ տուֆե սալերով:

Ինժեներական հաղորդակցուղիներից յուրաքանչյուրի համար (ջրամատակարարում, ծխահեռացում, էլեկտրամատակարարում, հեռահաղորդակցության կապուղիներ) նախատեսված են առանձնացված հորաններ:

Դեպի պատշգամբ ելք ունեցող բոլոր բացվածքները նախատեսվում է իրականացնել հրակայուն ապակիներից և շրջանակներից :

Վերելակը նախատեսվում է իրականացնել հակահրդեհային պահանջներին համապատասխան:

Աստիճանավանդակների դռների վրա տեղադրվում է ինքնավակման համակարգ:

Ավտոհանգրվանի հարկերը իրարից առանձնացված են ինքնաշխատ դարպասով:

Բնակելի համալիրի ստորգետնյա հարկերում նախատեսվում են պաշտպանողական կառույցներ բնակիչներին անհրաժեշտության դեպքում պատսպարելու նպատակով:

Համաշինարարական աշխատանքները կատարել ՀՀՇՆ 3.03.01-87-ով:

Նախագիծը մշակված է համաձայն.

ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

ՀՀՇՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ

ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

ՀՀՇՆ 20.04-2020 «ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՅԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ»


Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

**ՏԵԽՆԻԿԱՏՆԵՄԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍ	5651 Բ.Մ
ՎԵՐԳԵՏՆՅԱ ԴԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՆՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	2523.6 Բ.Մ (44.7%)
ՃԱՆԱՊԱՐՆԵՐ ԵՎ ՍԱԼՎԱԾՔ	161.8 Բ.Մ (2.9%)
ՍԱԼԻԿԱՊԱՏ ՄԱԿԵՐԵՍ	153.5 Բ.Մ (2.7%)
ԽՈՏԱԾԱԾԿՈՆՑԹՈՎ ՏԱՆԻՔ	1242.1 Բ.Մ (22.0%)
ԳԵՈՑԱՆՑՈՎ ԿԱՆԱՉԱՊԱՏ ՃԱՆԱՊԱՐՉՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍ	1570.1 Բ.Մ (27.8%)
ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ	2812.2 Բ.Մ (48.8%)

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:


1.6.3 Իրավիճակային հատակագիծ



1.6.4 Գլխավոր հատակագիծ



<b>Project</b> Նախագծի Անվանումը Multifunctional residential building Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր	<b>Customer</b> Պատվիրատու «ARM CONSTRUCT 1» LLC «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ 1» ՍՊԸ	<b>Object location</b> Օբյեկտի Տեղակայումը 60 Komitas street, Yerevan Republic of Armenian Հայաստանի Հանրապետություն ք. Երևան Կոմիտաս փող. 60	<b>Title</b> Գծագրի Անվանումը Master plan Գլխավոր հատակագիծ	<b>Date</b> Ամսաթիվ Sketch Issue 01	<b>Drawing Number</b> Գծագրի Համարը A.0.01	<b>Scale</b> Մասշտաբ 1:750 @ A3	<b>ARCHITECT OF RECORD</b> TIM FLYNN + ARCHITECTS ՆԱԽԱԳԾՈՂ ԳՐԱՐԱՐՆԵՐ ԹԻՄ ՖԼԻՆՆ + ԱՐԺԻԹԵԲԹՍ Հասցանքը: Բաղրամյան փող. ք. Երևան 0019 Հանրապետություն Հայաստան, 7 9 +374 43 511505 info@tfflynn.com 7 Bagramyan Street Yerevan 0019 Republic of Armenia T +374 43 511505 info@tfflynn.com
---	---	--	--	---	--	---------------------------------------	--



1.6.5 Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԵՎ ՄԻԱԿՈՐ ՄԱՍԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ																													
	ՅԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ
1. ԿԱՊԱԼԻ ՄՐՅՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ																														
2. ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ																														
3. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																														
4. ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՏՈՐԳԵՏՆՅԱ ՀԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ																														
5. ՇԵՆՔԻ ԿԵՐԳԵՏՆՅԱ ԿՈՐԴ ՏԱՐԱՇԱԿԱՆ ԿՈՆՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ																														
6. ՏԱՆՔԻ ԱՆՁՐԱՆՑԻԿ ՇԵՐՏԵՐԻ ՊԱՏ.																														
7. ՊԱՐՓԱԿՈՂ ՊԱՏԵՐԻ ՇԱՐՈՒՄ																														
8. ՄԻՋՆՈՐՄԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																														
9. ՇԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԿԱՐՈՒՄ																														
10. ԱՐՏԱՔԻՆ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																														
11. ՆԵՐՔԻՆ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																														
12. ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԴՈՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ																														
13. ԿԵՐԵԼԱԿԵՐ ԵՎ ԱԿՏՈՄԱՏԻԿԱ																														
14. ՆԵՐՔԻՆ ՀԱՐԿԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																														
15. ՏԱՐԱՇՔԻ ՄԱՔՐՈՒՄ / ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ																														
16. ԻՆՃ. ԳԾԵՐԻ ԵՎ ԱԿՏՈՄԱՏ. ՓՈՐՇԱՐԿՈՒՄ																														
ՆԱԽԱՊԱՏՐՈՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՔԱՅ	_____																													
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՔԱՅ	_____																													
ԱԿԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱՅՐՁԵՐԻ ՉԵԿԱԿԵՐՊՈՒՄ	_____																													

Աշխատանքների տևողությունը կազմում է 36 ամիս



**2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ**

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

1©Աշխատանքների բնույթից ելնելով<sup>ա</sup> բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով<sup>ա</sup> գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության<sup>a</sup> անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

## 2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” եքսկավատորով:

Յուրաքանչյուր շենքի պատող և կրող կոնստուկցիաների իրականացման համար ընտրված է КВ-405 մակնիշի աշտարակային կոունկ /տեխնիկական բնութագիրը տես ՇԿՆ-2 թերթ/: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրա ժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնն երը ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ռոտզման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ

աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

**Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են**

Բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Քանդման աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

**2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը**

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	KOMATSU PC 400-7	2
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
4	վերամբարձ ավտոկռունկ	Галичанин КС-65713-1	1
5	Աշտարակային կռունկ	TEREX СТТ 91-TS12	1
6	Տոփանիչ	CR 3/60	2
7	Գույքային կաղապարամած	կոմպլ.	1
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	2
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	2
11	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	2
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	3
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	3

15	Թրթրագլորոն	HAMI 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СВ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрА3-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	MA3-5550	հաշվարկով

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

**2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները**

***Հողային աշխատանքներ՝***

*Հանույթ՝ 67000մ<sup>3</sup>*

*Հետլիցք՝ 20300մ<sup>3</sup>*

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևան քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 70 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ – 4 մարդ
- Բանվորներ - 56 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ -10 մարդ

**2.3.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

Բնակելի շենքերի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես՝

	Նյութ	քանակ	Ընդհ. քանակ
1	Ընդհանուր Ե/Բ կոնստրուցիաներ	խ.մ	14440
2	Ընդհանուր ամրաններ	տ	2024
3	Արտաքին պատի շար -բլոկ 200մմ (Ներառյալ միջբնակարանային միջնորումները)	ք.մ	26600
4	Արտաքին պատի շար -բլոկ 100մմ (պատշգամբ)	ք.մ	2640
5	Ջերմամեկուսացում-փրփրապոլիստիրոլ	ք.մ	26400

6	Ապակեպատում- վիտրաժ/պատուհան	ք.մ	10120
7	Պատի երեսապատում-Ց/Ա սվաղ + ներկ	ք.մ	13960
8	Պատի երեսապատում-Գյուղական շար	ք.մ	6480
9	Պատի երեսապատում-Սրբատաշ շար	ք.մ	20700
10	Արտաքին բազրիք մետաղական	գ.մ	440

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

**ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\Sigma. i} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4 մարդ

**N**– ԻՏՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

**n<sub>1</sub>**– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 70 մարդ

**N<sub>1</sub>** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 1080 օր

$$W_{\Sigma. i} = (4 \times 0.016 + 70 \times 0.025) \times 1080 = 1959.12 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.814 \text{ մ}^3/\text{օր:}$$

**բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

**S<sub>1</sub>** – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ<sup>2</sup>,

**K<sub>1</sub>** – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450

$$U_1 = 500 \times 0.0015 \times 450 = 337.5 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$$

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2296.62 մ<sup>3</sup>/շին. ժամ:**

Բանվորկան և ԻՏՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն :

Ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, համաձայն Վեոլիա ջուր ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

## 2.4 *Տնտեսական - խմելու ջրամատակարարման ներքին ցանց.*

### *Տաք և սառը ջրամատակարարում*

Ք. Երևան, Կոմիտասի պ. 60 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի 1-ին, 2-րդ և 3-րդ մասնաշենքերի ջրամատակարարումը իրականացվում է քաղաքային ջրատարից՝ մեկ մուտքագծով :

Նախատեսնված է սառը ջրամատակարարման ներքին ցանց:

Սառը և տաք ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսվում է DN 15 - DN 150 պոլիպրոպիլենային, երկաթյա էլ. եռակցումային կարով (ГОСТ 10704-91) խողովակագծերը ջերմամեկուսացվում են գլանաձև ջերմամեկուսիչներով:

Տաք ջուրը պատրաստվում է կաթսայատանը ջրատաքացուցիչների միջոցով:

Տաք ջրամատակարարման ցանցի համար նախատեսված է տաք ջրի վերաշրջանառություն որը կարգավորվում է թերմոստատիկ պականով ավտոմատ ջերմաստիճանային կարգավորումով ապահովելով (մինչև 1,5 րոպեն ունենալ 50°C) տաք ջուր սանիտարատեխնիկական սարքերի խառնիչներում:

Վերաշրջանառության և տաք ջրի խողովակների վրա տեղադրել անշարժ հենարաններ և սիֆոնային կոմպեսատորներ:

Սառը ջրամատակարարման կանգնակը տեղադրվում է նախատեսնված հորանի մեջ: Ավտոկայանատեղում նախատեսված են ջրի ծորակներ լվացման համար:

Սանիտարատեխնիկական սարքերին սնող ջրագծերը մոնտաժվում են առաստաղների տակով և պատերի վրայով՝ հարդարման շերտի հետևում:

Ջրամատակարարման համակարգի համար նախատեսված է չորս պոմպերից բաղկացած ինվերտերային համակարգ:

Պոմպակայանում նախատեսված է ջրի հիդրոկուտակիչ անոթ մեմբրանային թաղանթով, որը թույլ է տալիս խուսափել պոմպերի կարճատև աշխատանքից և դիտվում է ավելի էներգարդյունավետ, որը բերում է պոմպերի ավելի երկարաժամեկտ և անխափան օգտագործման:

Պոմպակայանում նախատեսված է բաշխիչ սանրիկ, որը սնում և կարգավորում է ջրամատակարարման ներքին ցանը:

Բնակելի մասի բոլոր հարկերում տաք և սառը ջրի համար նախատեսված են բաշխիչ սանրիկներ, յուրանչուր բնակարանի համար առանձին ջրաչափական հանգույններով:

Սեյսմիկ առանցքների և առանձին մեկ կառույցից միուսն անցնող խողովակագծերի անցումը իրականացնել ձկուն խողովակներով:

Ջրամատակարարման ցանցի համար պահանջվում է 9.0÷10.0. մթն. ազատ ճնշում համապատասխանաբար 12,7 լ/վ էլքով:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ  
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

№№	ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՃՆՇՈՒՄ մ	ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ			ԾԱՆՈԹԱԳՐ.
			մ³/օր	մ³/ժամ	լ/վրկ	
1	ՍԱՌԸ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	93.0	350,0	36.47	12.67	
	ՏԱԶ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	93.0	131,0	20.41	7.42	
2	ԿԵՆՑՆԱԿՅԻՆ ԿՈՅՈՒՐԻ	-	350,0	36.47	12.67	
3	ԱԶՐԵՎԱՏԱՐ	-	-	-	18.8	

**2.5 Կենցաղային կոյուղու ներքին ցանց**

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի 1-ին, 2-րդ և 3-րդ մասնաշենքերի համար նախատեսված է կենցաղային կոյուղու ներքին ցանց :

Կենցաղային կեղտաջրերը հարկերի սան. սարքերից ինքնահոս կերպով կանգնակների միջոցով (DN100) հեռացվում են դեպի 0.000 նիշի հարկի առաստաղի տակով անցնող մայրուղային (DN100) խողովակազծերը, այնուհետև իջնեցվում է -3,750 նիշի հարկի առաստաղի տակով անցնող մայրուղային խողովակազծերի միջոցով (DN100) հեռացվում են դեպի կոյուղու արտաքին ցանց:

Կենցաղային կոյուղու կանգնակները տեղադրվում են նախատեսված հորանների մեջ, ստուգիչները տեղադրվում են հատակից 1.10 մ բարձրության վրա :

Կենցաղային կոյուղու կանգնակների վրա նախատեսված է մաքրման հանգույց (Прочистка) :

Կենցաղային կոյուղու կանգնակները բարձրանում են տանիքից 0,3մ բարձրության վրա:

Կաթսայատանը և երկու ջերմային հանգույցներում նախատեսված են գծային հոսակներ:

Սանիտարատեխնիկական սարքերից գնացող կոյուղազծերը մինչև կանգնակներ տեղադրվում են հատակի միջով և առաստաղի տակով:

Կենցաղային կոյուղու խողովակազծերը ընտրված են պոլիվինիլքլորիդային ռետինե սեղմիչ օղակներ ունեցող խողովակներից:

Ինչպես ջրի, այնպես էլ կոյուղային խողովակները փորձարկվում են մոնտաժումից հետո:

**2.6 Կենցաղային կոյուղու արտաքին ցանց**

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի բակային տարածքում նախատեսվում է կոյուղու ցանց որը միանում է կոյուղու քաղաքային ցանցին:



Կոյուղու բակային ցանցի համար նախատեսված է համակարգ 1000-1200 մմ տրամագծով ե/բ հավաքովի հորերով, de 250-350 մմ SN 8, պլաստիկ ծալքավոր խողովակներով:

## 2.7 Ջրահեռացման ներքին ցանց

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի 1-ին ,2-րդ և 3-րդ մասնաշենքերի համար նախատեսված է ջրահեռացման ներքին ցանց:

Շենքերի տանիքներից ջրընդունիչ ձագարների և գծային մի շարք հոսակների միջոցով անձրևի և հալոցքի ջրերը՝ կանգնակներով (DN150), ինքնահոս կերպով, հեռացվում են դեպի -3.750 նիշի հարկի առաստաղի տակով անցնող մայրուղային խողովակագծերը, այնուհետև մայրուղային խողովակագծերի միջոցով (DN150) հեռացվում են դեպի բակային ցանց:

Ստուգիչները տեղադրված են հատակից 1100մմ բարձրության վրա:

Տանիքում տեղադրված հեղեղատար ձագարները ունեն էլեկտրական տաքացուցիչներ:

Ավտոկանգառի նշված հատվածում նախատեսված է ջրահեռացման համակարգ, որն իրենից ներկայացնում է հատակին տեղադրված հոսակների (DN150), խողովակների և դրենեժային պոմպեր:

Պոմպակայանում նախատեսված է ջրահեռացնող գծային հոսակ, պոմպակայանի ջրալցումից խուսափելու համար:

Պոմպակայանում նախատեսվում է փոսորակ, 800x800x1000մմ չափերով, որի մեջ ընկղմված են երկու դրենաժային պոմպեր,  $G=6,0$  լ/վրկ.,  $H=7$ մ (1 աշխատող, 1 պահուստային):

## 2.8 Հրդեհամարման ցանց

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի համար նախատեսված է հրդեհամարման ներքին ցանց:

Հրդեհամարման համակարգը շենքի մյուս համակարգերից անկախ համակարգ է: Նախատեսված է ստորգետնյա ավտոկայանատեղիում (2- հարկ) և շենքերի կոմերցիոն և բնակելի հատվածներում:

Շենքերի բնակելի հատվածի հրդեհամարումը նախատեսված է իրականացնել հարկերում տեղադրված հրշեջ ծորակներից (2 շիթ , յուրաքանչյուրը  $q_{հծ1} = 2.6$  լ / վրկ):

Հասարական մասի հրդեհամարումը նախատեսված է իրականացնել հարկերում տեղադրված հրշեջ ծորակներից (1 շիթ , յուրաքանչյուրը  $q_{հծ1} = 2.6$  լ / վրկ):

Ստորգետնյա ավտոկայանատեղի հրդեհամարման համար պահանջվող ջրի հաշվային ծախսը որոշված է յուրաքանչյուր բաժանմունքի համար (2 շիթ , յուրաքանչյուրը  $q_{հծ2} = 5.2$  լ / վրկ) միաժամանակյա 1,0 ժամ աշխատելու պայմանից:

Համակարգի ընդհանուր հաշվային ծախսը՝

$$q_{ընդ} = 2 * q_{հծ1} + 2 * q_{հծ2} = 2 * 5.2 + 2 * 5.2 = 20.8 \text{ լ/վրկ}$$

$$W = (20.8 \times 3600) / 1000 = 75.0 \text{ մ}^3$$

$q_{\text{նոդ}}$ - միաժամանակյա հաշվային ծախսը (լ/վրկ) ,

W- պահանջվող ջրաքանակն է (մ<sup>3</sup>),

Նախատեսվում է հրդեհամարման ջրամատակարարման պոմպակայան:

Բնակելի յուրաքանչյուր շենքի ներքին հրդեհամարման համար պահանջվող ջրի քանակությունը կազմում է 5.0 լ/վրկ:(2 շիթ , յուրաքանչյուրը 2.5 լ / վրկ):

Հասարական մասի հրդեհամարումը նախատեսված է իրականացնել հարկերում տեղադրված հրշեջ ծորակներից (1 շիթ , յուրաքանչյուրը  $q_{\text{հծ1}} = 2.5$  լ / վրկ):

Առանձին պոմպային համակարգեր են նախատեսված ստորգետնյա ավտոկայանատեղի և բնակելի մասի համար, հասարական մասը սնվում բնակելի մասի պոմպերից:

Բնակելի մասի խողովակաշար մոնտաժվում է երկաթյա էլ. Եռակցումային Ø50-Ø 100մմ տրամագծերով խողովակներով (ГОСТ 10704-91):

Ավտոկայանատեղի մասի խողովակաշար մոնտաժվում է երկաթյա էլ. Եռակցումային Ø76 - Ø150մմ տրամագծերով խողովակներով (ГОСТ 10704-91):

Բնակել և հասարակական մասի 1-7-րդ հարկերում հրշեջ ծորակների մոտ ազատ ճնշումը գերազանցում է թույլատրելի 40մ-ը ուստի հրդեհամարման յուրաքանչյուր հրշեջ ծորակի կապույրում նախատեսված է տեղադրել ճնշման մարիչ տափօղակ  $d = 14-20$ մմ անցքով, այսպիսով ազատ ճնշումը իջեցնել թույլատրելի սահմաններում:

Բնակելի և հասարակական հարկերում նախատեսված են  $\Delta y = 50$  հրշեջ ծորակներ  $L = 20$ մ փողրակով և  $d = 16$ մմ ծայրափողով:

Ավտոկայանատեղի հարկերում նախատեսված են  $\Delta y = 65$  հրշեջ ծորակներ  $L = 20$ մ փողրակով և  $d = 19$ մմ ծայրափողով:

Բոլոր հրշեջ ծորակների կափույրներ նախատեսված են էլեկտրական միացումով որի կիսով չափ բացելու դեպքում ավտոմատ կերպով միացվում են համապատասխան բաժնի պոմպերը ապահովելով անրաժեշտ ջրաքանակը:

Պոմպակայանում բոլոր խումբ պոմպերի աշխատանքները ավտոմատացված են, կապված վթարային վիճակների, ջրամբարի ջրի սահմանային մակարդակների, ճնշման փոփոխությունների հետ:

Մոնտաժից հետո բոլոր խողովակները ենթակա են հիդրավիկ փորձարկման:

Բնակելի մասում ջրի հրդեհամարման ծորակները տեղադրված են բոլոր հարկերում, յուրաքանչյուրը 2.5 լ/վրկ էլքով, ծորակները տեղադրվում են ՍՊԻԿ-315Մ3Ե հրդեհամարման պահարաններում, հրդեհամարիչներին կից:

Ավտոկայանատեղի մասում ջրի հրդեհամարման ծորակները տեղադրված են բոլոր հարկերում, յուրաքանչյուրը 5,0 լ/վրկ էլքով, ծորակները տեղադրվում են ՍՊԻԿ-315Մ3Ե հրդեհամարման պահարաններում հրդեհամարիչներին կից, որոնք տեղադրված են հատակից 1.35մ բարձրության վրա:

Ավտոկայանատեղի մասում նախատեսված է նաև ավտոմատ փոշե հրդեհամարման համակարգ:

## 2.9 Ոռոգում

Ոռոգումը իրականացվում է պոմպակայանում տեղակայված ոռոգման պոմպի միջոցով: Ոռոգման պոմպի հզորությունը հաշվարկված է 1,5լ/վ ջրաքանակի և 40մ ճնշման համր: Յուրաքանչյուր զոնան հաշվարկված է այնպես, որ ջրացրիչների գումարային ջրաքանակը չգերազանցի պոմպի արտադրողության ջրաքանակը: 1մ2/ կանչ տարածքի 1 ջրման համար անհրաժեշտ ջրաքանակ ընդունել 4-6լ:

Ջրման համար անհրաժեշտ ջրաքանակը չգերազանցելու համար, ջրման պրոցեսի ընթացքում անհրաժեշտ է անջատել այն հատվածների ջրացրիչները, որոնք ջրվում են 1-ից ավելի ջրացրիչներով: Անհրաժեշտ է ոռոգման սեզոնի ավարտից հետո դատերկել ամբողջ համակարգը՝ քանի որ սառեցման խորությունը պահպանված չէ: Դատարկման համար բոլոր զոնաներում նախատեսվում են դատարկման հորեր: Դատարկման հորը պետք է տեղադրվի համակարգի ամենացածր կետերում:

Կանաչ գոտիների ոռոգումը իրականացվում է ռոտորային և ցնցուղային ջրացրիչների միջոցով: Ոռոգման համակարգի մոտաժման ժամանակ թույլատրվում է ռոտորային և ցնցուղային ջրացրիչների տեղերի փոփոխությունը ըստ փաստացի իրավիճակի՝ պահպանելով քանակը և տեխնիկական տվյալները:

Խողովակները երթևեկելի հատվածում մոնտաժելիս անհրաժեշտ է նախատեսել պաշտպանիչ պատյաններ:

Բոլոր ռոտորային և ցնցուղային ջրացրիչների ծածկողականությունը հաշվարկված է 20 - 25 մ աշխատանքային ճնշման դեպքում:

Ոռոգման համակարգի բոլոր խողովակները և դետալները հաշվարկված են PN8 ճնշման համար:

## 2.10 Ջեռուցման և ջերմամատակարարման համակարգեր

Շենքի ջերմամատակարարման աղբյուր է հանդիսանում տանիքում գտնվող կաթսայատունը՝ 85-650C ջերմակրի ջերմաստիճանային էջքով:

### 2.10.1 Ջեռուցման համակարգ

Տարվա ցուրտ ժամանակահատվածում ներսի օդի հաշվարկային պարամետրերը պահպանելու նպատակով կիրառվել են առանձին ջեռուցման համակարգեր հետևյալ սենքերի համար.

- Բնակելի սենքերում ջրային ջեռուցման համակարգ,
- Հասարակական մասի ջրային ջեռուցման համակարգ

Ջերմակրի հաշվարկային պարամետրերը 80-60<sup>0</sup>C: Համակարգում հաշվարկային ճնշումը 2,5 բար:

Բնակարանների ջեռուցումն իրականացվում է ընդհանուր կանգնակներին միացված բաշխիչներից: Ջեռուցման համակարգը երկխողովականի է՝ արհեստական շրջանառությամբ ներքին մատակարարման փակուղային սխեմայով: Որպես ջեռուցիչ սարքեր ընտրված են ջեռուցիչ մարտկոցները:

Հասարակական մասի ջեռուցման համակարգը երկխողովականի է՝ արհեստական շրջանառությամբ վերին մատակարարմամբ փակուղային սխեմայով: Որպես ջեռուցիչ սարքեր ընտրված են ջեռուցիչ մարտկոցները և ֆանկոյլները:

Ջեռուցման համակարգն իրականացված է մետաղական (կանգնակներ, միջանցքի բախշիչներ) և մետաղապլաստ (բախշիչներից հետո) խողովակաշարերով:

Վերելակների նախամուտքերում տեղադրվում են ջեռուցիչ մարտկոցներ:

Հասարակական տարածքներում նախատեսված են կանալային և կասետային ֆանկոյլներ:

Ջեռուցման համակարգն իրականացված է PPR խողովակաշարերով:

Խողովակները ջերմամեկուսացվում են գլանաձև ռետինե ջերմամեկուսիչով:

Ջեռուցման համակարգի կանգնակների վերին կետերում նախատեսված են ավտոմատ օդահաններ, իսկ ստորին կետերում՝ դատարկման փականներ:

Խողովակների ջերմային ընդարձակումը կոմպենսացվում է բնական եղանակով, մայրուղային խողովակների վրա տեղադրվում են անշարժ հենարաններ:

### 2.10.2 *Ջերմամատակարարման համակարգ*

Հասարակական տարածքներում օդափոխության սարքերի ջերմամատակարարումը իրականացվում է տանիքին տեղադրված կաթսայատնից:

Ջերմամատակարարման համակարգերի ջերմատարը ջուր է 80-60°C պարամետրերով:

Ներածվող օդի ջերմաստիճանը կարգավորվում է օդատաքացուցիչների միացման հանգույցում, որտեղ նախատեսված են փոքր օդակի շրջանառու պոմպ, եռաքայլ և հաշվեկշիռ փականներ:

Համակարգի բարձր կետերում տեղադրվում են ավտոմատ օդահեռացուցիչներ:

### 2.11 *Ընդհանուր փոխանակային և հակաձխային օդափոխության համակարգեր*

Շենքում նախատեսված է հետևյալ օդափոխության համակարգերը:

- Բնակարանային հատվածում նախատեսված է կենտրոնացված կանգնակային բնական արտաձման օդափոխության համակարգ: Օդափոխության հաշվարկը կատարված է 0.5 պատիկ/ժամով, ներաձման օդի բնական ներթափանցմամբ:
- Հասարակական մասում իրականացված է ընդհանուր փոխանակային արհեստական դրդմամբ ներաձման-արտաձման համակարգերը
- Ավտոկանգառում նախագծված է մեխանիկական ներաձման-արտաձման համակարգեր, արտաձումն իրականացվում է ներքևի և վերևի գոտիներից հավասարաչափ: Ներաձումը կոմբինացված է կոմպենսացիայի հետ:

Օդափոխվող սենքերի խմբավորումն ըստ օդամշակման սարքերի իրականացված է ըստ վերջիններիս նշանակության, միկրոկլիմայի պարամետրերի, այդ սենքերի շահագործման ռեժիմների, հրդեհային բաժանմունքների և պայթյունահրդեհային վտանգավորության կատեգորիաների:

Բնակելի մասում օդափոխության կանգնակները նախատեսված են սպուտնիկային տիպի, յուրաքանչյուր հարկի օդափոխության խողովակը միացվում է ուղղաձիգ կենտրոնական կանգնակին՝ կանգնակի մեջ բարձրանալով 2,5 մ: Նման համակարգը թույլ է տալիս հրդեհի դեպքում խուսափել հարկերի միջև ծխի տարածումից: Բնակելի մասի խոհանոցի և ս/հ արտածման հորանների վրա նախատեսված է հիբրիդային դեֆլեկտորներ: Կենտրոնական ուղղաձիգ կանգնակը, ինչպես նաև նրան միացող բնակարանային օդափոխման խողովակները նախատեսված են EI30 հրակայունությամբ: Հորանների մեջ բոլոր օդատարները պատրաստվում են 0.5 մմ-անոց թիթեղից, Պ-դասի ամրությամբ և պատվում են հրակայուն ներկով շերտով, ապահովելու համար անհրաժեշտ հրակայունությունը: Այնպիսի դեպքերում, երբ բնակարանային օդափոխման հորիզոնական օդատարը կենտրոնական կանգնակին միացվելիս հատում է միջբնակարանային պատը, նշված օդատարը նախատեսվում է EI60 հրակայունությամբ միջանկյալ անցնող բնակարանի հատվածում: Արտածման օդափոխությունը նախատեսված է սանհանգույցներից և խոհանոցներից, որոնք միացվում են համապատասխանաբար առանձին կենտրոնական կանգնակների: Խոհանոցներում նախատեսված է նաև առանձին օդափոխման խողովակ՝ խոհանոցային զոնտի արտածման համար:

Հրդեհի դեպքում մարդկանց անվտանգ տարահանման և ծխի տարածումը խոչընդոտելու համար նախատեսված է հակահրդեհային օդափոխության միջոցառումների ցանկ, որը ներառում է.

- Հրդեհի ազդանշանի դեպքում տարածքների օդափոխության համակարգերի անջատում:
- Բնակելի մասի միջանցքներից ծխի հեռացումը կատարվում է տանիքում տեղադրված հակածխային օդափոխության արտածման համակարգերի միջոցով: Միջանցքներից ծխահեռացման համար յուրաքանչյուր հարկի միջանցքի պատին տեղադրվում են ծխահեռացման փականներ EI60 հրակայունությամբ: Ծխահեռացման համակարգն ամբողջովին պետք է ապահովված լինի EI60 հրակայունությամբ:
- Միջանցքներից հեռացվող ծխի համար նախատեսված է օդի կոմպենսացիա:
- Ավտոկայանատեղիում ծխի հեռացումը կատարվում է տանիքում տեղադրված հակածխային օդափոխության արտածման համակարգի միջոցով: Ծխահեռացման համար յուրաքանչյուր հարկի առաստաղի վրա տեղադրվում են ծխահեռացման փականներ EI90 հրակայունությամբ: Ծխահեռացման համակարգն ամբողջովին պետք է ապահովված լինի EI90 հրակայունությամբ: Բնակարանային մասում ծխահեռացման օդատարը ապահովվել է EI 90 հրակայունություն:

- Վերելակների հորաններում, տարհանման աստիճանավանդակներում և ավտոհանգրվանում վերելակների նախամուտքում նախատեսված են օդի դիմհարի համակարգեր:
- Վերելակների հորանների դիմհարի օդամուղները տեղադրվում են բնակելի շենքի տանիքին:

## 2.12 Ընդհանուր փոխանակային օդափոխության համակարգերի հակահրդեհային պաշտպանություն

Շենքում ընդհանուր փոխանակային օդափոխության հրդեհային անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները.

Չհրկիզվող նյութերից պատրաստված միջնորմերի հատման տեղերում նախատեսված են հակահրդեհային փականներ՝ նորմավորված հրակայնության աստիճանով:

Ընդհանուր-փոխանակային օդափոխության սարքավորումների վիճակի մասին տեղեկատվությունը տրվում է ընդհանուր վահանակին, որը հրդեհի ժամանակ անջատում է բոլոր ընդհանուր-փոխանակային օդափոխության սարքավորումները:

Օդափոխության հորանները նախատեսված են նորմավորված հրակայնության աստիճանով:

Ավտոկայանատեղիում համատեղված արտաձման և ծխահեռացման համակարգերի վրա առկա հակահրդեհային փականները համապատասխանաբար նորմալ բաց և նորմալ փակ վիճակի են բերված : Այդ ՀՀՓ-ները ավտոմատ գործի են դրվում էլեկտրական ռեվերսիվ շարժաբերով: ՀՀՓ-ները ունեն նորմավորված հրակայնության աստիճան՝ EI 60:

Հակահրդեհային փականները , որոնք տեղադրված են ճարտարապետական կոնստրուկցիաների հատման տեղերում նախատեսված են հրակայնության հետևյալ աստիճաններով.

- EI 90 -նորմավորված հրակայնության աստիճան ունեցող ճարտարապետական կոնստրուկցիա REI 150 և ավելի:
- EI 60 -նորմավորված հրակայնության աստիճան ունեցող ճարտարապետական կոնստրուկցիա REI 60:
- EI 30 -նորմավորված հրակայնության աստիճան ունեցող ճարտարապետական կոնստրուկցիա REI 45(EI 45):
- EI 15 -նորմավորված հրակայնության աստիճան ունեցող ճարտարապետական կոնստրուկցիա REI 15(EI 15):

Մնացած դեպքերում հակահրդեհային փականները նախատեսվում են օդատարի հրակայնության աստիճանով ,բայց ոչ պակաս քան EI 15:

## 2.13 Աղմուկից և վիբրացիայից պաշտպանության միջոցառումներ

Նախագծում նախատեսված են օդամշակման սարքերի, օդամուղների և ջեռուցիչ սարքերի վիբրացիայի և աղմուկի դեմ միջոցառումներ:

Ջեռուցման և օդափոխության համակարգերը նախագծվել են հաշվի առնելով

СП 51.13330.2011 «Защита от шума» նորմատիվային փաստաթղթի պահանջները:

Ջեռուցման համակարգի խողովակաշարերի ամրացումները և կախիչները նախատեսված են ռետինե ներդիրներով: Համակարգում ջերմակրի շարժման արագությունը ընդունված է ոչ ավել, քան նորմավորվում է СП 60.13330.2012 նորմատիվային փաստաթղթում: Ջեռուցման համակարգի շրջանառու պոմպերը տեղադրված են բետոնե հիմքի վրա: Պոմպերը միացվում են խողովակներին ռետինե ձկուն միացումներով:

Օդափոխության համակարգերում նախատեսված են աղմուկախլացուցիչներ, ներքաշող սարքավորումների համար ձկուն միացումներ, որոնք ապահովում են սպասարկվող սենքերում նորմավորված աղմուկի չափը: Օդամշակման սարքավորումները առաստաղից կախվում են հակավիբրացիոն ոտիկներ միջոցով: Սարքերի արտաքին կորպուսները նախատեսված են ցածր աղմուկով և մեկուսացված տեսակի:

## 2.14 Էներգախնայողության միջոցառումներ

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ընդհանուր-փոխանակային օդափոխության համակարգերում ջերմության ռեկուպերացիայի հնարավորությամբ սարքերի ներդնում, որը թույլ է տալիս խնայել ավելի քան 70% ջերմային էներգիա ձմռանը և 65% սառեցման հզորություն ամռանը, որն անհրաժեշտ էր ծախսել օդի լավորակման և նորմալ միկրոկլիմա ապահովելու համար:
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Շենքի ջերմամատակարարման աղբյուր հանդիսացող կաթսայատունը համալրված է միայն բարձր ՕԳԳ-ով կոնդենսացիոն կաթսաներով, որոնց արդյունավետությունը հասնում է մինչև 106.8% :
- Ջերմասառնամատակարարման համակարգերի շրջանառու պոմպերը նախատեսված են հաճախության կարգավորմամբ:
- Սառեցման ագրեգատները՝ չիլլերները, ընտրված են բարձր EER գործակցով մոդելներ, որը թույլ է տալիս խնայել էլեկտրական էներգիայի մեծ քանակություն:
- Օդատաքացուցիչների և օդասառեցուցիչների ջերմակրի ծախսի ավտոմատ կարգավորում .
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում .
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով .
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Օդորակման բարձր արդյունավետության համակարգի կիրառում
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ դեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում

**2.15 Էլ. մատակարարում**

Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններ ստանալու համար կառուցապատող ընկերությունը դիմել է <<ՀԵՑ>> ՓԲԸ-ին:

**2.16 Գազամատակարարում**

Գազամատակարարման համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով դիմել է «Գազպրամ Արմենիա» ՓԲ ընկերությանը, համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

**2.17 Կանաչապատման աշխատանքներ**

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Բնակելի համալիր տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակային և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատնկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:



Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգումն կիրականացվի միանալով մոտակա ոռոգման ցանցին, պայմանագրային հիմունքներով:

### 2.17.1 *Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ*

Կանաչապատ տարածքի 1 մ<sup>2</sup>-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ<sup>2</sup>:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝  $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝  $S$  – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝  $S_1 = 2485.7 \text{ մ}^2$ ,

$K$  – ոռոգման օրական հաճախականությունն է,  $K = 2$

$t$  - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է,  $t = 175$  օր

$$W_{u.3} = (0.006 \times 2485.7) \times 2 \times 175 = \underline{5219.97} \text{ մ}^3/\text{տարի}$$

2.17.2 Կանաչապատման սխեմա և տեսակային կազմ



### 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Կոմիտասի փ. 60 հասցեում:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

#### 3.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխ-նստվածքային ֆրակցիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Հետազոտվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում:

Համաձայն ինժեներա-երկրաբանական եզրակացության հետազոտվող տարածքին բնորոշ են հետևյալ պայմանները.

**Գեոմորֆոլոգիական տեսակետից** տարածքի սահմաններում ռելիեֆի հիմնական տարրերն են հանդիսանում գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը, որոնք հյուսիսից հարավ հարում են Հրազդան գետի գառիթափ լանջերին: Նախագծվող տարածքը ներկայացնում է հրաբխային դելյուվիալ լանջի մի հատված, որը քաղաքաշինական նպատակներով ենթարկվել է հարթեցման և որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատնվում են 1203-1204մ մետրերի սահմաններում:

**Հիդրոերկրաբանական տեսակետից** տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 70 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում՝ բեռնաթափվելով Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղակայված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները: Արաբկիր համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

**Ֆիզիկաերկրաբանական** վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

**3.2 Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը**

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքերը՝ դոլերիտային բազալտները, որոնց ծածկում են ժամանակակից տեխնոգեն և էյուվիալ-դեյուվիալ առաջացումները:

Տեղամասը բաղկացած է հետևյալ գրունտերից վերնից–ներքև: Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ 4 շերտերը:

**Շերտ-1 Խճային գրունտ** Խճային գրունտ, մանրախճի պարունակությամբ, կավավազային-ավազակավային լցոնի մինչև 25-30% պարունակությամբ:

**Շերտ-2 Բազալտներ** ամուր մոխրագույն, կապտամոխրահույն ծակոտկեն, տեղ- տեղ խոռոչավոր, ճեղքավորված բեկորային անջատումներով, կարծր: Շերտում հանդիպում են խարամների ոչ մեծ հզորության գնդաձև և ոսպնյակաձև ներփակումներ: Շերտում լցանյութը կավավազային է 10-15%

**Շերտ-3 Բազալտ** մոխրագույն, տեղ-տեղ խանամի պարկերով, մեծաբեկորային, չեղքավորված, ամուր, արմատական տեղադրմամբ, տարածքում համատարած է:

Ստացված տվյալների հիման վրա պարզ է դառնում նախագծվող տարածքի երկրաբանալիթոլոգիական կտրվածք, որին մասնակցում են՝ խճայն գրունտներ, բազալտներ և բազալտ խարամի պարկերով:

**3.3 Կլիման**

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +42 °C: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմայաբանություն» СНиП II-7.01-2011 տվյալների համաձայն:

**Օդի միջին ջերմաստիճանը, °C**

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

**Օդի հարաբերական խոնավությունը, %**

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

**Տեղումների բնութագիրը**

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ												տարեկան
մաքսիմալ օրական												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<u>28</u>	<u>31</u>	<u>38</u>	<u>48</u>	<u>55</u>	<u>29</u>	<u>16</u>	<u>8</u>	<u>11</u>	<u>31</u>	<u>30</u>	<u>28</u>	<b>353</b>
22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	<b>47</b>

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-«Արաբկիր» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

**Քամու բնութագիրը**

Աղյուսակ 2.4.

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								
		Միջին արագությունը, մ/վ								
		Հյուսիս-սայիս (Հս)	Հյուսիս-Արեւելյան (ՀսԱրլ)	Արեւելյան (Արլ)	Հարավ-Արեւելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արեւմտյան (ՀվԱրմ)	Արեւմտյան (Արմ)	Հյուսիս-Արեւմտյան (ՀսԱրմ)	
2	3	4	5	6	7	8	9	10	11	
889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	
		1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9	
	ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	
		3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5	
	հուլիս	28	32	3	3	8	16	7	3	
		6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6	
	հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	
		2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0	

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 2.5 – 2.7 աղյուսակներում:

**Արեգակնային ճառագայթում (Երևան-Ագրո)**

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ <sup>2</sup>												Տարեկան գումարային
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
325	391	637	799	963	955	965	858	673	532	349	293	7740

**Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)**

Աղյուսակ 2.6.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
84	109	162	200	267	320	351	332	293	231	144	85	2578

**Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)**

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
11	7	5	2	0,6	0,08	0	0,08	0,1	1	4	10	41

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 2.8 – 2.9 աղյուսակներում:

Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Արաբկիր

Աղյուսակ 2.8.

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա				ամենա ցուրտ հինգօրյակի				Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C) ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝							
ապահովվածություն				միջին ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամառային	0			8	10	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
0.98	0.92	0.98	0.92					-3,1	-21						
							-1.9	1.1	1.9						

Կլիմայական պարամետրերը տարվա տար ժամանակահատվածում, Երևան- Արարկիք

Աղյուսակ 2.9.

Օդի ջերմաստիճանը, °C		Միջին ամսական արագացողությունը	Միջին ամսական միջին արագացողությունը	Միջին ամսական ամենատաք ամսվա միջին արագացողությունը	Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
0.95	0.99				ամսական	ամսական	ամսական	ամսական	ամսական	ամսական
33	33	41	31,8	13,3	49	35	198	47	ՀվԱրմ	1,7



### 3.4 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:


Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 դիտակետ և 5 դիտակայան: 2019 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, սակայն տարվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվել են գերազանցումներ: Իրականացված դիտարկումների 24%-ում դիտվել են փոշու, 15%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 3%-ում՝ ազոտի երկօքսիդի, 0.1%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուր-ներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերութ-յունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

2018 թվականինի տվյալների համաձայն քաղաքում անշարժ աղբյուրներից արտանետված վնասակար նյութերում գերակշռում են ածխաջրածինները, ածխածնի մոնօքսիդը, փոշին, ծծմբի երկօքսիդը և ազոտի օքսիդները:



Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները

Որոշվող միացություն	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup> (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակը 2018թ. ընթացքում		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	ՍԹԿ միջին օրական, մգ/մ <sup>3</sup>
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ	0.150 (դիտ. N7)	66	1	0.017	0.05
Ազոտի երկօքսիդ	0.081 (դիտ. N18)	28	2	0.015	0.04
Փոշի	0.869 (դիտ. N2)	416	58	0.127	0.15
Գետնամերձ օզոն	0.029 (դիտ. N1)	2	2	0.005	0.03


Ածխածնի մոնօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.








Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիաների փոփոխությունները և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.



Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

### 3.5 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները 2020 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

#### Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով<sup>2</sup>:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով:<sup>3</sup>

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

### 3.6 Հողերի նկարագիրը

#### *Հողերը*

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

### 3.7 Հողային ռեսուրսներ

Բնակելի համայնքի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 67000 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 20300 մ<sup>3</sup> հետլիցք: Ավելցուկային 46700մ<sup>3</sup> ծավալով հողային

<sup>2</sup> Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն. Տեղեկագիր 2020թ

<sup>3</sup> Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն. Տեղեկագիր 2020թ.

զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով`

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

### 3.8 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային` կիսաանապատների տարբերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը` 1. Ֆրիգանա (Ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

### 3.9 Կենդանական աշխարհ

Երևանի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են` կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես` սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատ սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ոնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրագդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Արաբկիր վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

**3.10 Թափոնների կառավարում**

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Մակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Շինարարական աղբ, այդ թվում քանդման աշխատանքներ	IV	9120060001004	360 մ <sup>3</sup>
2.	Տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	1 տ

3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 09 5	46700 տ
----	--	---	------------------	---------

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

**3.11 Արաբկիր վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ**

Այս բաժնում ներկայացնում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը: Ցանկում ներառված է ընդամենը 150 հուշարձան (21 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
Ամրոց Չորաբերդ	մ.թ.ա. 2 հզ	Քեռու փող.	<a href="#">1.3/1</a>	Հրազդանի ձախափնյա հրվանդանի վրա, Մաթեմատիկական մեքենաների ինստիտուտից ամ
Քարայր-կացարան «Նոր Արաբկիր-1», («Չորաբերդ-1»)	մ.թ.ա. 2 հզ, 14-17 դդ.		<a href="#">1.3/1.1</a>	Չորաբերդի տակ, Հրազդանի կիրճի վերին մասում
<a href="#">Ինստիտուտի համակառույց. Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը</a>	1968 թ.	Ազատության պող. 26	<a href="#">1.3/2</a>	ճարտ.՝ Է. Տիգրանյան
Հուշարձան Արմենակ Մնջոյանի	1973 թ.		<a href="#">1.3/2.1</a>	քանդ.՝ Ս. Մանասյան, Հ. Մուրադյան, ինստիտուտի բակում
Խճանկարներ «Ներփակ կորեր». «Երկրաչափական տարածություն»	1970 թ.	Հ. Հակոբյան փող. 3	<a href="#">1.3/3</a>	նկ՝ Օ. Մինասյան, Երևանի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի հաշվողական կենտրոնի դահլիճում
<a href="#">Կամուրջ Հրազդան (Հրազդանի մեծ</a>	1956 թ.	Կիլյան և Լենինգրադյան	<a href="#">1.3/4</a>	ճարտ.՝ Գ. Աղաբաբյան, կոնստ՝



հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
<a href="#">կամուրջ</a> , (Կիևյան կամուրջ)		փող. միջև		Ա. Հովնանյան, Վ. Փինաջյան, Ս. Դուրգարյան, Ն. Սլավինսկի, Երևանի կենտրոնն ու հս շրջանները միացնում է Աջափնյակին և Աշտարակի մայրուղուն
Հիդրոէլեկտրակայանի շենք. Քանաքեռի Հ. Տեր-Աստվածատրյանի անվան Հէկ-ը	1936 թ.	Հրազդանի ձախ ափին, Քանաքեռի ձորում	<a href="#">1.3/5</a>	ճարտ.՝ Մ. Գրիգորյան
Հուշարձան Հովսեփ Տեր-Աստվածատրյանի	1966 թ.		<a href="#">1.3/5.1</a>	հիդրոէլեկտրակայանի տարածքում
Հուշահամալիր «Նոր Արաբկիր» («Վերածնունդ»)	1985 թ.	Արաբկիր զբոսայգի	<a href="#">1.3/6</a>	ճարտ.՝ Գ. Ղամբարյան
Հուշաղբյուր Նոր Արաբկիրի 50-ամյակին	1975 թ.	<a href="#">Կոմիտասի պողոտա</a> 19	<a href="#">1.3/7</a>	ճարտ.՝ <a href="#">Սպարտակ Կնտեղյան</a> , նկ՝ Վ. Օհանյան
<a href="#">Հուշարձան Ղազարոս Աղայանի</a>	1955 թ.	Կիևյան փող. 9	<a href="#">1.3/8</a>	թիվ 63 համանուն դպրոցի առջև, քանդ.՝ Ե. Վարդանյան
<a href="#">Հուշարձան Նաիրի Չարյանի</a>	1974 թ.	Հ. Հակոբյան փող. նրբ 3	<a href="#">1.3/9</a>	թիվ 130 համանուն դպրոցի առջև, քանդ.՝ Ն. Նիկողոսյան, ճարտ.՝ Ջ. Թորոսյան
Հուշարձան Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին	1967 թ.	Ազատության պող.	<a href="#">1.3/10</a>	պողոտայի սկզբնամասում, ճարտ.՝ Ս. Գուրգալյան, Ջ. Թորոսյան
<a href="#">Հուշարձան «Մուսակիբեռնետիկա»</a>	1972 թ.	Հ. Հակոբյան փող. 3	<a href="#">1.3/11</a>	Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի տարածքում, քանդ.՝ Ե. Քոչար
<a href="#">Հուշարձան Ալեքսանդր Շիրվանզադեի</a>	1958 թ.	Վաղարշյան փող. 24/17	<a href="#">1.3/12</a>	թիվ 21 համանուն դպրոցի առջև, քանդ.՝ Ա. Հարությունյան, ճարտ.՝ Ֆ. Դարբինյան

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
<a href="#">Հուշարձան Ռուբեն Սևակի</a>	1995 թ.	Բաբայան փող. 40	<a href="#">1.3/13</a>	Թիվ 151 համանուն դպրոցի բակում, քանդ.՝ Լ. Թոքմաջյան
Հուշարձան «Վահագն Վիշապաքաղ»	1985 թ.	Վաղարշյան փող. 12	<a href="#">1.3/14</a>	ճարտ.՝ Ա. Աղայան, Գ. Գրիգորյան, քանդ.՝ Վ. Հարությունյան
<a href="#">Հուշարձան Լև Տոլստոյի</a>	1982 թ.	Ազատության պող. 5	<a href="#">1.3/15</a>	Թիվ 128 համանուն դպրոցի առջև, քանդ.՝ Լևոն Թոքմաջյան, ճարտ.՝ Ռոմեո Ջուլիակյան
<a href="#">Հուշարձան Բաֆֆու</a>	1987 թ.	Կոմիտասի պող. 37	<a href="#">1.3/16</a>	Թիվ 36 համանուն դպրոցի առջև
<a href="#">Հուշարձան Լևոն Օրբելու</a>	1973 թ.	Օրբելի եղբայրների փող. 22	<a href="#">1.3/17</a>	<a href="#">համանուն ֆիզիոլոգիայի ինստիտուտի շենքի</a> առջև, քանդ.՝ <a href="#">Գաբրիել Եփրոյան</a>
Մշակույթի տուն «Կանազ»	1958 թ.	Ազատության պող. 19	<a href="#">1.3/18</a>	ճարտ.՝ Ս. Մանուկյան, Վ. Տոնիկյան
Զրանցք՝ Դավայի	մ.թ.ա. 8-7 դդ.	Հրազդանի աշտիին	<a href="#">1.3/19</a>	վրկո՝ 1815 թ., Հուսեին Ալի խանի կողմից Կիլյան կամրջից հս, անցնում է նաև Աջափնյակ վարչական շրջանի տարածքով
Փողոցի կառուցապատում. Կիլյան փողոցը	1951-1953 թթ.	Կիլյան փող.	<a href="#">1.3/20</a>	ճարտ.՝ Գ. Թամանյան, Ֆ. Դարբինյան, Ֆ. Մանե, Բ. Սարգսյան
Քարայր-կացարանների համալիր Քանաքեռի	մջնդ	Հրազդանի կիրճի ձախափին, Քանաքեռ Շէկ մոտ	<a href="#">1.3/21</a>	
Քարայր-կացարան «Արաբկիր-11», («Նոր Արաբկիր-2»)	16-17 դդ.	Հրազդանի ձախափնյա զառիթափին, Դավիթաշենի կամրջի մոտ	<a href="#">1.3/21.1</a>	
Քարայր-կացարան «Քանաքեռ-4», («Նոր Արաբկիր-3»)	16-17 դդ.	Հրազդանի ձախափնյա զառիթափին, Քանաքեռի այլումինի գործարանի մոտ	<a href="#">1.3/21.2</a>	նախորդ քարայր-կացարանից 2 կմ հս

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
Քարայր-կացարան «Քանաքեռ-5»	մջնդ	Հրազդանի ձախ ափին	<a href="#">1.3/21.3</a>	Հէկ-ից 400 մ hu
Քարայր-կացարան «Քանաքեռ-7»	մջնդ	Հրազդանի աջ ափին	<a href="#">1.3/21.4</a>	հրվանդանի լանջին
Քարայր-կացարան «Քանաքեռ-8»	մջնդ	Հրազդանի աջ ափին	<a href="#">1.3/21.5</a>	Հէկ-ից 50 մ hu
Քարայր-մատուռ «Քանաքեռ-2»	մջնդ	Հրազդանի ձախ ափին		

**4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

**4.1 Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

**4.2 Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

**4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն**

**4.3.1 Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- իրականացնել մեքենաների և շինտեխնիկայի անվադողերի լվացում մինչև շին. հրապարակից դուրս գալը

**4.3.2 Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:
- Կանաչապատ տարածքների ոռոգումն կիրականացվի միանալով մոտակա ոռոգման ցանցին, պայմանագրային հիմունքներով:

**4.3.3 Հողային ռեսուրսներ**

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վատելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

**4.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը**

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

• Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

• Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

• Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

• Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

**4.3.5 Հակահրդեհային միջոցառումներ**

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող

օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

**4.3.6 Աղմուկ և թրթռում**

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

**4.3.7 Թափոնների կառավարում**

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

**4.3.8 Տարածքի բարեկարգում կանաչապատում**

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ոռոգումն կիրականացվի միանալով մոտակա ոռոգման ցանցին, պայմանագրային հիմունքներով:

Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

**5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ**

Բազմաբնակարան բնակելի բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ  
Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել  
350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1050 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ  
ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության  
կանոնների պահպանմանն:



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,

		<p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p> <p>Տարածքի բարեկարգում/ կանաչապատում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ</li> <li>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում:</li> <li>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</li> <li>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.</li> <li>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում</li> </ul> <p>- կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>-ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար</p> <p>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</p> <p>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>- Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</p>

<p>Թափոնների կառավարում</p>	<p>▪</p> <p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով</p> <p>հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</li> <li>- շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</li> <li>- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</li> <li>- Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</li> <li>- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել</li> <li>- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը</li> </ul> <p>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <ul style="list-style-type: none"> <li>- Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;</li> </ul>
-----------------------------	--	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</li> <li>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում</li> <li>- հերթականության ապահովմամբ</li> <li>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակ</li> <li>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ</li> </ul>	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում</li> <li>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Բներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Բներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում  Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ  վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Կառուցապատվող հողամաս  Շինհրապարակ	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին գնում  Արտաքին գնում	Շինարարության Ավարտին  Շինարարության ընթացքում	Կապալառու,  Կապալառու,

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արևանէտումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ձև N 1-2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)  
N 01/18 - 07/216 - Վ «08» «02» 2021թ.

**Օբյեկտ** *Քազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման (բարձր դիսկոնթրոլային օբյեկտ, IV կատեգորիա)*  
(օբյեկտի անվանումը, կատուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հանկրճ թնօրոնում, կորուստներ, դիսկոնտրոլային անտեղծումը (կատեգորիան))

**Գտնվելու վայրը** *Արարկեր վարչական շրջան, Կոմիտասի պողոտա 60*  
(վարչական շրջանի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի համարակոդ)

**Կառուցապատող** *«ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ Ի» ՍՊԸ*  
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

**Առաջադրանքի տրամադրման հիմքը** *Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի նկարագրման իրավունքների պետական գրանցման հ. 19022020-01-0275 վկայականը, 21.12.2020թ. իրազեկման վերաբերյալ հ. ԱՄ2335 դիմումը, երևանի քաղաքապետի «08» «02» 2021թ. հ. 216-Վ որոշումը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթոլիկոսարանի 25.12.2020թ. հ. 1144 գրությունը, էքսիզային նախագիծը:*  
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող ակտիվային փաստաթղթեր)

**1. Հողամասը գտնվում է** *ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ*  
(հողամասի դիմացը, հողամասի կադաստրային համարը, հողատարածության կատեգորիան և գործառնական նշանակությունը)

**2. (\*) Հողամասի չափերը** *0.565 հա:*  
(հողամասի ասիմետրիկ կողմնաչափերը նշանակումը, մակերեսը (հա))

**3. Հողամասի առկա վիճակը** *Արդարացի անվճարված ծանրաբեռնված հողամաս:*  
(ռեզիզի թնօրոնվելը, շենքերի (այդ թվում բառնյան ներակա) ամբարձրությունը (տարածությունը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական կոմպլեքս և այլն), կառուցապատման, բարեկարգումը և այլն)

**4. (\*) Տրանսպորտային պայմանները** *Կոմիտասի պողոտա, Ն. Ջառյան փողոց, Ներքալային ճանապարհ:*  
(ճանապարհների անվանումները, երկաթուղային տրամադրված մոտեցումները և այլն)

**5. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ** *Կից գործող ինժեներական գծեր և հաղորդակցողիներ:*  
(ջրամատակարարման, կոլորտի, գազամատակարարման, սառչ ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

**6. (\*) Կից հողամասեր** *Ազատության պողոտա, արվարձանական և հասարակական շենքեր, «Սուրբ հասչ» եկեղեցի:*  
(կից հողազտագործումների անվանումը և դրանց սահմանները համասնայն ներկայացված սկիզբով)

**7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)** -----  
(տարածքների անվանումը, կարգավիճակը և այլն)

**8. (\*) Հատակագծային սահմանափակումներ** -----  
(տեղանկում գործող արտադրական, կառուցվածքային սահմանափակումների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում սերվիտուտները)

**9. Ճարտարապետահատակագծային պահանջներ** *Մշակելու բնակելի և հասարակական տարածքների բաղկացած համալիրի նախագիծ հ. 19022020-01-0275 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:*  
(ինչպե՞ս պետք է կառուցվեն և կառուցվեն փաստաթղթերի պահանջները, ավել քան ընդգծված նշանակված փաստաթղթերի դրույթներից կամ դրանց թափափուրդի դեպքում կարգավորված (կազմակերպող) քաղաքաշինական միջավայրի պայմաններին, առաջադրություններ ճակատների մակերեսի, տակիցներ, արտաքին դիմերի, պատուհանների համամասնությունների և գույնային լուծումների վերաբերյալ)

**9.1. (\*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)** -----

**9.2. (\*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)** *Հարակից հողամասերից, շենքերից և շինություններից կառույցի հեռավորությունը նախադրենյու գործող նորմատիվային պահանջների համաձայն:*

**9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)** *Կառույցի հիմնական բարձրությունը նախադրենյու «Սուրբ հասչ» եկեղեցու թմբուկի ստորին նիշին համապատասխան՝ հարակից շենքերից 8-ից մինչև 19 հարկ աստիճանաձև շենքադրման հնարավորությամբ:  
Ռեզիզային անվան հաշվին հնարավոր է նախադրենյու ստորագրված հարկեր:  
Հնարավոր է մասնակի ավելի բարձր ծավալների շենքադրում փոխարինել սպասարկող ասֆիճանավանդակների, փեխնիկական սենյակների և վերելակների հորանների համար:*

**9.4. կառուցապատման խտության գործակիցը** -----

**9.5. կառուցապատման տոկոսը** *60% (ներառյալ ճանապարհներ, սպվածքներ և անցուղիներ)*  
(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) (տոկոսներով) (%)

**9.6. կառուցապատման տոկոսը** *40% և ավելի*  
(կառույցային տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

**9.7. այլ պահանջներ**

- Սույն թույլտրության 20-րդ կետով ամրագրված պահանջները պահպանվելու նպատակով՝ շինարարական հրապարակի կազմակերպման նախագծում, պետական և համայնքային սեփականություն հանդիսանող հողամասերի օգտագործման պարագայում նշել դրանց մակերեսը:
- Նախագծով ապահովել հարակից տարածքների շահագործման այդ թվում արևահարման ռեզիզի ազդեցության և նորմատիվային պահանջները:
- Հարակից շենքերի լուծումները մշակել համաձայն պարտավորող առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները:
- Կառույցներում կենտրոնացված օդափոխության համակարգ չնախատեսելու դեպքում, կառույցի արդարացի փեխը և ճարտարապետական հորինվածքը հետագա խաթարումներից զերծ պահելու համար, նախադրենյու թողարկված համակարգ՝ փեխային օդափոխիչների փեղադրման համար:
- Գլխավոր հարակից գծեր մշակելիս հաշվի առնել երկրորդական սպասարկման ճանապարհի կազմակերպման հեռանկարային հնարավորություն:
- Կառույցում նախատեսել հասարակական նշանակության տարածքների սպասարկման համար անհրաժեշտ առանձնացված ինժեներական հորաններ, բացառելով հետագայում արդարացի ճակատներով օդափոխվող օդափոխիչի անցկացումը:
- Նախագծով լուծել ավտոբուսափոխակ անվտանգ ելումուրի և բացօթյա ավտոբուսային խնդիրները:
- Տանիքները նախադրենյու հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ:







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 19 փետրվարի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

«ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ 1» ՍՊԸ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 60

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Անշարժ գույքի առուվաճառքի և գրավի /հիփոթեքի/ պայմանագիր 23.01.2017թ. թիվ 1168

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 01-003-0223-0197

Մակերեսի չափը (հա)՝ 0.565

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 19022020-01-0275, գաղտնաբառ՝ ZTYIVHILFF7D**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

**5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

- 1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-003-0223-0197-001	Արտադրամաս	1256.6 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

Առկա են 404.5 քմ մակերեսով ինքնական կառուցված շինություններ, թվով 1 /մեկ/ ինքնական բացված դուռ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Դիանա Քալանթարյան


Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 19022020-01-0275, գաղտնաբառ՝ ZTYIVHILFF7D

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կառող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

Էջ 2/2





ՀՈՂԱՄԱՍԻ		Երկարություն (մետր)	Կոորդինատները		Գծաչիկ չափերը (մետր)	ԾԵՆՔ, ԸՆԴՆՈՒԹՅԱՆ						
Մակերևույթը (հա)	0.56500հա		X	Y		Մտնմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)	Տարածքի հարաբերակցությունը	Գործառնական նշանակությունը (անվանումը)	Քառակուսի (մետր)	Կոորդինատները		Գծաչիկ չափերը (մետր)
Մակերևույթը (հա)	0.56500հա	1	4452441.80	8450368.11	12.73	1	արտադրամաս	1	4452497.05	8450398.00	0.00	
Ծածկագիրը		2	4452454.52	8450368.65	9.79			2	4452508.13	8450306.60		9.10
Նպատակային նշանակությունը	Արդյունաբերության, լեզվաօգտագործման և այլ նպատակական նշանակություն	3	4452464.31	8450369.06	10.80			3	4452506.19	8450395.78		0.82
Գործառնական նշանակությունը	Արդյունաբերական օբյեկտների	4	4452475.09	8450369.52	5.71			4	4452521.91	8450396.83		15.76
Հողամասը ծանրաբնակավ չէ		5	4452474.66	8450375.21	6.25			5	4452520.00	8450421.54		24.79
		6	4452480.88	8450375.74	42.56			6	4452535.30	8450422.56		15.33
		7	4452523.36	8450378.24	15.16			7	4452532.96	8450452.84		30.37
		8	4452522.19	8450393.35	6.19			8	4452501.04	8450450.78		31.09
		9	4452528.37	8450393.76	3.48			9	4452502.90	8450438.38		12.44
		10	4452528.13	8450397.24	6.23			10	4452493.82	8450437.77		0.10
						1	4452497.05	8450398.00	41.90			
						2	4452483.12	8450395.08	0.00			
						1	4452483.12	8450395.08	8.66			
						2	4452491.76	8450395.65	3.15			
						3	4452491.52	8450398.79	8.66			
						4	4452482.89	8450397.97	2.90			
						1	4452483.12	8450395.08	0.00			

Կատարող (ստորագրություն)

Ա. Դադայան (անուն, ազգանուն)

13.02.2021 (տրամա ամիս, ամսաթիվը)

Որակավորման վկայականի (նամուրը)

041

15.12.2011

(տրամա ամիս, ամսաթիվը)

Իրավաբանական անձի

290,110,122243 (գրանցման գրանցման համարը)

«ԴԱ-ԴԷ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (տնվածանուն)

*Արմյան*



«Արմ Կոնստրակտ» ՍՊԸ

լ/ա Արամ Ավագյանին

/հասցեն՝ ք. Երևան, Ա. Մերոբի 2ա շ. 20 բն./

« 29 » *հունվար* 2021թ.

N *ՎՊ/23042*

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում

Հարգելի պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր դիմումի՝ ներկայացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մշակված ջրամիացման և ջրահեռացման, շրջանցման նախագծման տեխնիկական պայմանը ՎՊ4150/2021: Դրա հիման վրա անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի առնվազն 2 փաթեթ և մյուս կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համաձայնեցնելուց հետո, այն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից հաստատելու և միացման նախահաշիվ ստանալու նպատակով, ներկայացնել ընկերության Շահագործման տնօրինություն՝ հետևյալ հասցեներից որևէ մեկով.

- 1. ք. Երևան, Փափագյան 2-րդ նրբ., Կովկասյան ՕԿՁ
- 2. ք. Գյումրի, Դուդկոյի 2

Հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի 1 բնօրինակ փաթեթը պահվելու է ընկերությունում:

Տեղեկացնում եմ նաև, որ նոր համակարգի կառուցման աշխատանքները սկսելուց առաջ հարկավոր է այդ մասին տեղեկացնել 1-85, 011 300185 հեռախոսակենտրոնի միջոցով:

Հողային աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:

Նոր համակարգի կառուցման տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով հարկավոր է դիմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար լիցենզավորված կազմակերպության, որոնց ցանկը հրապարակված է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում, օգտվել վերջինիս ծառայություններից և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունն ներկայացնել կառուցված օբյեկտի վերաբերյալ կից ցանկում նշված փաստաթղթերը՝ ընկերության կողմից միացման աշխատանքներ կատարելու, առևտրային հաշվառքի սարք տեղակայելու և Ձեզ հետ Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելու համար:

Մինևույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ կառուցված նոր համակարգի սեփականության իրավունքի Հայաստանի Հանրապետությանն անհատույց հանձնումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

*Մելլեջյալ*


Գլխավոր տնօրեն

Մ. Շահինյան

Պատասխանատու՝  
Լ. Մարտիրոսյան

*Մարտիրոսյան*

ՀՀ, ք. Երևան, 375025, Արովյան 66ա  
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185  
Էլ. փոստ՝ office@vjur.am  
Վեբ-էջ՝ www.veolia.am



RA, Yerevan, 375025, Str. Abovyan 66a  
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185  
E-mail: office@vjur.am  
Web site: www.veolia.am


*Արմյան*



«Հաստատում եմ»

Արտադրատեխնիկական բաժնի պետ՝

*[Signature]* Ա.Մարտիրոսյան  
«29» *[Signature]* 07 2021թ.




### Տեխնիկական պայման ՎՋ 4150/2021

(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման, շրջանցման նախագծման)

ք.Երևան, Կոմիտասի պողոտա 60  
/Տարածքի հասցե/

«Արմ Կոնստրակտ»ՍՊԸ  
/Ինժեների անուն, ազգանուն/

044001060  
/Հեռախոսահամար/



210099

Համակարգ	Ջրամատակարարում	Ջրահեռացում	Հեղեղատար	Հրդեհաշի.
Կոմունիկացիայի գտնվելու վայրը	1.Կոմիտասի պողոտա 2.Կոմիտասի պողոտա 60 տարածքով անցնող	Կոմիտասի պողոտա	Ն.Ջարյան փողոց	
Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը	1.ժ=400մմ, P=2.0մբն. պող. 2.ժ=500մմ, P=0.1մբն. բուջ	ժ=300մմ	ժ=700մմ	
Միացման կետի տեղը	Կոմիտասի պողոտա 60 տարածքով անցնող ժ=500մմ ջրատարը շրջանցելուց հետո ջրամիացումը կատարել ժ=400մմ ջրագծից	Կոմիտասի պողոտայով անցնող կոյուղագծին	Ն.Ջարյան փողոցով անցնող հեղեղատարին	
Միացման տրամագիծը	Համաձայն նախագծի			
Ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը				
Այլ պահանջներ	Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր	Կոյուղագծի միացման կետում կառուցել դիտահոր	Հեղեղատարի միացման կետում կառուցել դիտահոր	Տես * կետը
Ջրամատակարարման գրաֆիկ	Շուրջօրյա			

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին : Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին :


Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա :


Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց բույլտվությունները և/ կամ համաձայնությունները :

\* Հրդեհաշիջումը նախատեսել համաձայն ՀՀԸՆ 40.01.02-2020թ. և ՀՀ Կառ. 08.08.2019թ բիվ 1025 որաշման, բիվ 29 հավելվածի, հիդրանտի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր: Հաշվի առնելով, որ վերոնշյալ հասցեում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ինքնահոս մատակարարվող ջրի ճնշումը 2.0մբն. է, ապա անհրաժեշտ է նախատեսել ինվերտորային պոմպ: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից շահագործվող ջրահեռացման համակարգին միանալու համար անհրաժեշտ է տեղադրել ֆեկալ պոմպ, քանի որ տվյալ տարածքը նիշով գտնվում է ավելի ցածր, քան շահագործվող խողովակը :

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից շահագործվող հեղեղատար համակարգին միանալու համար անհրաժեշտ է տեղադրել ֆեկալ պոմպ, քանի որ տվյալ տարածքը նիշով գտնվում է ավելի ցածր, քան շահագործվող խողովակը :

Տարածքով անցնող ջրագիծը շրջանցել համաձայն նախագծի:

«Արաբկիր» տեղամասի պետ՝  Գ.Գասարյան

Ինժեներական խմբի պատասխանատու՝  Ա.Կարապետյան

Կատարող՝  Ա.Կարապետյան



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ Էջմիածին  
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ  
Դ Ի Վ Ա Ն Ա Պ Ե Տ



MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN  
CATHOLICOSATE  
CHANCELLOR

Թիվ 1144

Դեկտեմբեր 25, 2020 թ.

ԱՐ ՈՐ ԱՆԿ Է

Այսու տեղեկացնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Արաբկիրի եկեղեցու հարևանությամբ՝ Կոմիտաս 60 հասցեում կառուցվող բազմաբնակարան բնակելի համալիրի հետ կապված չունի առարկություններ:

  
ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ  
ԴԻՎԱՆԱՊԵՏ



